ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2018 թվականի N 20/1

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 7) կետի պահանջով, ինչպես նաև «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 7 մասով, ՀՀ հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել ՀՀ հաշվեքննիչ պալատի պահպանման ծախսերի փոփոխված նախահաշիվը՝ 1064110.0 հազ. /մեկ միլիարդ վաթսունչորս միլիոն հարյուր տաս հազար/ դրամ գումարի չափով՝ պակասեցնելով «էներգետիկ ծառայություններ» - 4212հոդվածը՝ 3518.0. հազ. /երեք միլիոն հինգ հարյուր տասնութ հազար/ դրամով, «կապի ծառայություններ» - 4214 հոդվածը՝ 2464.0 հազ. /երկու միլիոն չորս հարյուր վաթսունչորս հազար/ դրամով, «ներքին գործուղումներ» - 4221 հոդվածը՝ 32146.5. հազ. /երեսուներկու միլիոն հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր/ դրամով, «արտասահմանյան գործուղումների գծով» - 4222 հոդվածը՝ 37697.6 .0. հազ./ երեսունյոթ միլիոն վեց հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր/ դրամով, «տեղեկատվական ծառայություններ» - 4234 հոդվածը՝ 240.4 հազ. /երկու հարյուր քառասուն հազար չորս հարյուր/ դրամով, «ներկայացուցչական ծախսեր » - 4237 հոդվածը՝ 996.4 հազ. /ինը հարյուր իննսունվեց հազար չորս հարյուր/ դրամով, «մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» - 4252 հոդվածը 13.2 հազ. /տասներեք հազար երկու հարյուր /դրամով և «պարտադիր վճարներ » - 4823 հոդվածը ավելացնելով՝ «պարգևատրումներ,դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» - 4112 հոդվածը՝ 77733.5 հազ. /յոթանասունյոթ միլիոն յոթ հարյուր երեսուներեք հազար հինգ հարյուր/ դրամով:

2. Հաստատել ՀՀ հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդի փոփոխված նախահաշիվը՝ 21595.7հազ. /քսամեկ միլիոն հինգ հարյուր իննսունհինգ հազար յոթ հարյուր/ դրամ գումարի չափով՝ պակասեցնելով «այլ ծախսեր» - 4861 հոդվածը՝ 21181.7 հազ. /քսանմեկ միլիոն հարյուր ութսուն մեկ հազար յոթ հարյուր / դրամով, ավելացնելով՝ «պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» - 4112 հոդվածը՝ 21181.7 հազ. /քսանմեկ միլիոն հարյուր ութսուն մեկ հազար յոթ հարյուր / դրամով:

3. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար, ՀՀ հաշվեքննիչ պալատի աշխատակիցներին պարգևատրելու նպատակով, հատկացնել՝ «ՀՀ հաշվեքննիչ պալատի պահպանման ծախսեր» ծրագրի «պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» - 4112 հոդվածից՝ 77733.5 հազ. /յոթանասունյոթ միլիոն յոթ հարյուր երեսուներեք հազար հինգ հարյուր/ դրամ, իսկ ՀՀ հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդից՝ 21181.7 հազ. (քսանմեկ միլիոն հարյուր ութսունմեկ հազար յոթ հարյուր) դրամ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ.ՅՈԼՅԱՆ